**Արձանագրություն N 3**

ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով գնանշման հարցման

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 02 ապրիլի 2019թ

ժամը 12:40

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ա.Միրաքյանը

անդամներ՝Վ. Հովհաննիսյանը, Գ.Մարտիրոսյանը, Վ. Ֆրանգյանը

քարտուղար՝ Ա. Մկրտչյանը

**I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին**

---

(Ա.Միրաքյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում գնահատման թերթիկները տրամադրվել են հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետով սահմանված ժամկետում ստացել է կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման պատասխանը, ըստ որի մասնակցի մոտ առկա է պարտք, որը չի գերազանցում հիսուն հազարը և 1-ին,2-րդ չափաբաժինների մասով մասնակցի գնային առաջարկի մեկ տոկոսը, հետևաբար մասնակցի ներկայացրած հայտարարությունը 1-ին և 2-րդ չափաբաժինների համար համարվում է իրականությանը համապատասխանող, իսկ 3-րդ չափաբաժնի մասով գերազանցում է մեկ տոկոսը, ինչպես նաև «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից 01.04.2019թ. ստացվել է գրություն ըստ որի «Գեո-Նալ» ՍՊԸ-ն պարզաբանում է, որ այդ պարտքը գոյացել է թե սխալ հաշվարկի, թե այլ տեխնիկական պատճառներով և կազմակերպության կողմից այն վճարվել է արդեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց.

ա/ «Գեո-Նալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների համար գնահատել բավարար, իսկ 3-րդ չափաբաժնիհամար անբավարար :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ընտրված մասնակից ճանաչել «Գեո-Նալ» ՍՊԸ-ին

բ/ 3-րդ չափաբաժնի համար մերժել «Գեո-Նալ» ՍՊԸ-ին, և այն հայտարարել չկայացած

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

---------------------------------------------------------------------------

(Ա.Միրաքյան)

5. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պահանջների և ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-19/02 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________________ Ա.Միրաքյան

անդամներ՝ ____________________ Վ. Հովհաննիսյան

____________________ Գ.Սարտիրոսյան

____________________ Վ. Ֆրանգյան

քարտուղար՝ ____________________ Ա. Մկրտչյան